Պետրոս Դուրյան

Նայվածք մը

Ամրան տապեն ես խոնջած՝
Թավուտքի մը բյուր բյուր կայծ
Տերևներուն շուքն ինկած՝
Ո՞րչափ սիրեմ շունչն հովտաց՝
Մեղմիկ
Հողմիկ:

Արշալույսին կանուխկեկ՝
Ո՞րչափ սիրեմ՝ ոտքյս մերկ
Կոխելով մարգ ծաղկաներկ՝
Լըվացվելու գտնել մեկ
Հստակ
Վըտակ:

Երբ միայնակ ես գամ ման,
Ո՞րչափ սիրեմ կրակներս այն
Ներշնչելու սերս անձայն՝
Հոտոտելու կույսի նման՝
Քաղցրիկ
Ծաղիկ:

Երբ հովանի աստղազարդ
Ըլլա երկնից գմբեթարդ,

Որչափ սիրեմ ի սաղարթս
Երբ կը հյուսե երգ ի վարդ
Թրթրակ
Սոխակ:

Բայց ասոնք չեմ փոխեր բնավ
Մեկ նայվածքին հետ անբավ
Թե յուղարկե ինձ հեշտյավ
Իր աչերեն վառ . ու սյավ
Լուսիկ
Կուսիկ:

1871